

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվանը 6 ռուբլի... Առանձին համարները 7 կոպեկով:

Փոփոխում գրվում են միմյանիստ խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ»... կամ Tiflis. Rédaction «Mschak»... Տ է Լ Է Փ օ Ն № 253:

# ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպեկով... Տ է Լ Է Փ օ Ն № 253:

## Հ Ի Մ Ն Ա Վ Ի Բ Գ Ի Թ Գ Ո Ր Ա Ր Ծ Ր Ո Ւ Ն Ի

### ԲՈՎԱՆԳՎՈՒԹԻՒՆ

Ժամանակ է վերջ դնել. Բնիչ յանձնաժողով և հայերի վիճակը. Միջազգային կօնֆերենցիա հայոց հարցի առիթով. Հայոց հարցը և եւրոպական մամուլը. ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բժշկական ընկերութեան ժողովը. Նամակ խմբագրութեան. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ փոփոխոյց. ՀՆՈՒԱԳԻՐՆԵՐ. ԲՈՐՍՍԱ. ՅԱՅՍԱՐԱՐՈՒԹԻՒՆԵՐ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գրական երկօրներին:

### ՍՄԱՆՍԻՆԵՐ ԵՎ ԳԵՐՁ ԳՆԵԼ

Ուստաստանում ճորտութիւնը վերացնելուց յետոյ, վերացվելին և բոլոր այն կարգերը, որոնք անպատարեր և վիրաւորական էին մարդու քաղաքացիական արժանաւորութեան, անհատական պատիւի և ինքնասիրութեան համար Այդ հիման վրա վերացվեց և ծեծը, որ առաջ համարվում էր ոչ թէ իբրև մի գրկանք, մի ծանր պատիժ, այլ և կրթական մի միջոց, նոյն իսկ մանկավարժական մի անհրաժեշտութիւն:

Եւ ծը վերացվեց, սակայն ոչ բոլորովին: Իբրև պատիժ մի ձև նա մնաց գաւառական ստորին հիմնարկութիւններում, զիւղական շրջանում: Եւ թէ և այժմեան օրէնսդրութիւնը անմիջապէս չէ թելադրում իր կողմից այդ բանը, սակայն նրան չէին հալածում, նրան գործադրում էին վարչական ստորին հիմնարկութիւններին ներկայացուցելները, և երբեմն շատ լայն կերպով:

Մի քանի գեներալներ նորերս գլխեցին կառավարութեան խնդրելով, որ յատուկ օրէնքով կարգաւոր և որոշ կերպով յարգելի ծեծը և սահմանվի օրէնք, որով կարելի լինի հալածել այն անձանց, որոնք կը շարունակեն գործադրել ծեծը:

Չը հասնելով ոչ մի բարեբար հետեւանքի, ծեծը ունի մի և նոյն ժամանակ շատ փրասակար կողմեր, և առաջ է բերում շատ արտուր հետեւանքներ: Նկատված է, որ ծեծված մարդը ծանր մտատանջութեան մէջ է ընկնում, յուսահատվում է և արեցութեան է տալիս իրան, կամ թողնում է իր զիւղը և հեռանում օտար տեղեր՝ գործ և պարտպանուք որոնելու: Եւ ծեծում են մարդուն իր կնոջ, օրոցի, իր հարեւանների առաջ և

գրանով նրա ինքնասիրութիւնը ոչնչացնում են, նրա մարդկային արժանաւորութիւնը սոսկալիս անուամբ նրա հեղինակութիւնը, նրա նամուրը գեանով տալիս և վիրաւորում:

Քաղաքակիրթ մարդկութեան հասարակական կարծիքը վաղուց դատապարտել է ծեծը, իբրև փաստակար, իբրև մարդու քաղաքացիական արժանաւորութեան հակասող և ամենավիրաւորական մի միջոց, որը չէ կրթում, չէ դատարարական, այլ աւելի անբարոյականացնում, աւելի վնասում է մարդկային հասարակութիւնը:

Պետութեան մէջ ներկայումս գոյութիւն ունեցող օրէնքներն ունին բոլորովին դեմ է ֆիզիքական վիրաւորանքի այն տեսակ արտայայտութեան, ինչպիսին է ծեծը: Եւ այդ պատճառով, հաստատ հիմք կայ կարծելու, որ մի քանի գեներալներ խնդրեց ծեծը վերջացնել վերացնելու մասին, կառավարչական բարձր շրջաններում համակրութիւն կը գտնի, և որոշ օրէնքով կարգելի այդ փաստակար սովորութիւնը:

### ԲՆՆԻՉ ԹԱՆՁՆԱԺՈՂՈՎ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿ

Լօնդոնի «Daily Telegraph» լրագրի եւսանդուն թղթակիցը շարունակում է հետաքրքիր իրողութիւններ երևան հանել թիւրքաց հայերի այժմեան վիճակի և քննիչ յանձնաժողովի գործունէութեան մասին: Նա մի նոր ընդարձակ հեռագիր է ուղարկել Հասան-կալէյից, որը խփել է կարգի Լօնդոն ապրիլի 2-ին և որի մէջ, ի միջի այլոց, ասված է հետեւեալը.

Մուշի ձեր թղթակցից ուղարկած սուրհանդակը, որ տանում էր նամակներ և հեռագիրներ, ահա վեց օր է, որ չէ վերադառնում: Նա կամ սպանվել է քիւրդերից կամ ձերբակալվել օստրալիանութիւնից:

Այժմ կարող եմ տեղեկացնել ձեզ, որ եւրոպական քննիչ յանձնաժողովը շատ դանդաղ է գործում: Այն օրից, որ յանձնաժողովի պատուիրակները սկսել են իրանց նիստերը, մինչև այսօր միայն երկու սուրհանդակ են ուղարկել իրողութիւն: Գեներալներին ուղղած իրանց զեկուցագրերը տանելու համար: Հիմք կայ կարծելու, որ

յանձնաժողովը չէ կարող աւարտել իր գործը յունիս ամսից առաջ:

Յանձնաժողովի անդամները կամենում են այցելել Սասունի զիւղերը ապրիլի վերջին, այդտեղ կը մնան առնուազն տասն կամ տասնհինգ օր. յետոյ նրանք կայցելեն Բիթլիսը, և աւարտելով այրտեղ իրանց գործը, կը վերադառնան Էրզրում:

Այդ տեղեկութիւնները հաղորդելուց յետոյ, հեռագրի մէջ երկար խօսվում է այն մասին, թէ որքան անիրաւացի է այն կարծիքը, թէ հայերը գործում են մի գաղտնի յեղափոխական ընկերութեան թելադրութեամբ և առաջ է բերում բազմաթիւ փաստեր, ապացուցանելու համար, թէ այն տանջանքները, որոնց ենթակայ է թիւրքացիայում բազմաշարքայ հայ ազգը, և որոնց նա ամենայն համբերութեամբ տանում է, մի ուրիշ, եւրոպական ազգին վաղուց ստիպած կը լինէին ապստամբվել:

Հայ ժողովուրդը, — ասված է հեռագրի մէջ, ամբողջ երկիր մէջ անսովոր մեծ համբերութեամբ տանում է այն վարչութիւնը, որի տակ նա հեծում է և որը ամեն մի ուրիշ ազգի կը տանէր դէպի ապստամբութիւն: Այն չարամիտ լուրը, որ գրվել է թիֆլիսից այս ժողովրդի մասին, որ իբրև թէ նա գործում է մի գաղտնի ընկերութեան թելադրութեամբ, զուրկ է միանգամայն ճշմարտութիւնից: Այդ տեսակ անուն կրող ընկերութիւն չը կայ ամենեւին Հայաստանի մէջ: Հայերը անընդունակ են գաղտնիք պահելու կամ մի զորեղ կազմակերպութիւն ստեղծելու, և նրանց վերագրված յեղափոխական ծրագրերը լոյս հիւանդ ուղղի արտադրութիւններ են:

Այն անարդարութիւնները և հարստահարութիւնները, որոնց զօհ է դարձել հայ ժողովուրդը, ամենախոնարհ եւրոպացիներից անդամ ապստամբներ կը շինէին: Կանանց շարունակ անպատուում են, սեփականութիւնը ենթարկում է յափշտակութեան, մարդ, կին, երեխայ տանջվում են, վիրաւորվում, սպանվում. քրիստոնէական կրօնը հրապարակօրէն նախատվում է: Ով յանդիմանում է զանդառնել, խնդրանքները չեն լինում, և նոյն իսկ ամենաբարձր պաշտօնական անձինք, որոնք վայելում են սուլթանի վստահութիւնը, բայց և ակնյայտ կերպով իրանք են առաջին օրինակը

տալիս: Քրիստոնէայ վաճառականների դոյքը հրապարակով աւարտութեան է ենթարկվում մահապատիւներէ: Եւ երբ այդ ողորմելի ժողովուրդը փակում է իր կանոնները կողոպտուածից ազատվելու համար, վալիները հրամայում են բանալ: Այս ընդհանուր ակնարկից յետոյ հեռագիրը մանրամասն կերպով և բազմաթիւ առանձին դէպքեր պատմելով, նկարագրում է թիւրքացի հայ ժողովրդի թշուառ և անտանելի վիճակը:

### ՄԻՋԱԶԳՍԵՆ ԿՕՆՖԵՐԵՆՑԻԱ ՀԱՅՈՑ ՀԱՐՅԻ ԱՌԻՌՈՎ («La République Française»)

Երբ կաւարովին շարունակվող քննութիւնները հայոց գործերի առիթով, այն է՝ Մուշում գտնվող միջազգային յանձնաժողովի քննութիւնը, Բիթլիսից աւելի կամ պակաս հեռաւորութեան վրա գտնվող եւրոպական հրապատուների քննութիւնը, վերջապէս անգլիական երեք թղթակցների քննութիւնը, որոնք հիմնաւորապէս ճանաչում են թիւրքին, և որոնք ծագովելով, աջողացրել են Բ. Գրան պաշտօնական արգելի առաջն անուն, և թափանցել էր զորումը ու Բիթլիսի վերայեաները, մենք կուենենար, անկապաւած, մի նոր միջազգային կօնֆերենցիա:

Այդ կօնֆերենցիային կը նախագահի օսմանեան արտաքին գործերի մինիստրը և բաղկացած կը լինի Կ. Պոլսում գտնվող եւրոպական վեց զեսպաններէ, և շատ կարելի է իւրաքանչիւր պետութեան արտաքին զեսպաններից: Կօնֆերենցիան կը գումարվի մօտ մայիսի 15-ին, երբ Մուշում գտնվող քննիչ յանձնաժողովը կը կարողանայ վերադառնալ Սասունի գաւառի գիւղերը այցելութիւն գործելուց յետոյ, որ ճանապարհները դիւռ են ամեն տեղ ձիւնով են ծածկված:

Անկապաւած, Բ. Գրանը առանց տնտեսութեան չէ նայում այդ կօնֆերենցիայի գումարվելուն. և չը նայելով որ ընդհանրապէս կօնֆերենցիաները իրական մեծ հետեւանքներ չեն ունենում, նա ուրիշ միջոց չունի այդպէս խիստ պատասխանատուութիւնից դուրս գալու համար: Առանց հաւատ ընծայելու «Daily Telegraph» լրագրի ողբերգական նկարագրութիւններին և Լօնդոն փախած հայերի մեղադրատախանի պատմութիւններով առաջացաւ, բարձրացաւ, դարձաւ ժամանակի տէրը: Երկրամբ ու պողպատը, որոնք իսլամի ձեռքից ազգեր սպառնու ահաւոր գործիքներ էին, փոխեցին իրանց դերերը և դարձան ազգերի բարօրութեան գործիք:

Լուսաւոր միտքը ի վերջոյ հանդիսացաւ մի այնպիսի ոյժ, որի առաջ չբացան բռնութեան իրաւունքները: Եւ յետ քաջվեց, ընդարձացաւ իսլամը, նա, որ ատելութեան, վրձի զբաղմունքը արագործել էր իբրև երկնքի պատգամ: Այդ դեռ բաւական չէ: Ամուր ու անպտուղ մի հաստատութիւն, նա տիրողի բարձրութիւնից իջաւ մինչև ստորին գրութիւնը և սկսեց քրիստոնէական կուլտուրայի ետեղից քարը ընկնել, լաւ զգալով որ ժամանակը բերել է անողորմ պահանջ—կամ առաջադիմութիւն, կամ ոչնչութիւն: Եւ քրիստոնէայ աշխարհը հեռու չէ փախցնում իր նախկին տանջողին: Կրօնական ատելութեան ժամանակները վաղուց անցել են, դաւանաբանական երկար ու անվերջ վեճերը մէկ էլ յարութիւն չեն առնի սխալատիկ դարերի նեղ դերբեմաններից աշխարհին նոր թշուառութիւններ պատճառելու համար: Հանրամարդկային բարօրութիւնը դառնում է այն հոր գործընթաց, որ կարող է եղբայրացնել ազգերը առանց խտրութեան կրօնի և ծագման: Այդ պատճառներով քաղաքակիրթ քրիստոնէութիւնը չէ

ժխտում իսլամ ազգերի հետ խաղաղ գործակցութեան նախաւորութիւնը, եթէ միայն իսլամը անկեղծ զղջման, վերանորոգվելու հաստատ նշանները ցոյց տայ: Բայց նա պարզ տեսնում է, որ իսլամը այն ձևով, ինչպէս ընդունվել է նրա հիմնադրից յետոյ մինչև այժմ, մի հակակուլտուրական, քաղաքացի հիմնարկութիւն է. առաջադիմութիւնը, որ վերանորոգելու խիստ պահանջներ ունի, իսլամի տիրապետութեան մէջ ոչնչանում է, որովհետև միանգամայն հակառակ է նրա ոգուն ու ձգտումներին:

Անհրաժեշտ փաստերի ահաղին կոյտի մէջ ամենապարզը, համոզիչը ժամանակակից «հիւանդ մարդու» գրութիւնն է: Այդ օրինակը առաջ է բերում Յովհաննէս Հաւորի պատարը իբրև վերջաբան իր զեղեցիկ աշխատութեան, որ կրում է «Խալամ» վերնագիրը և որի մէջ մանրամասն և բարեխիղճ ուսումնասիրութեան առարկայ է դառած իսլամը սկզբի օրերից մինչև մեր ժամանակները: Հիւանդ մարդը, ինչպէս յայտնի է, Թիւրքիան է: Մահաբաւական արեւելում այդ պետութիւնը դրաւած ունի մի առանձին զիւրք. Ասիայի արեւմտեան ծայրերում հաստատվելով, նա իր մարմնի մի մասը անց է կացրել Եւրոպա և այդտեղ անդադար չվելով է եւրոպական քաղաքակիրթութեան հետ: Արտաքին եւրոպականութեան մի կե-

## Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

### ԳՐԱԿԱՆ ԵՐԵՎԱՆԻՆԵՐԻՑ

#### III

Հեղ, փշեայ պսակը ճակատին, նահատակների սքանչելիքը դառնալու պատրաստ, նա ասում էր. «Գնացէ՛ք, աշակերտեցէ՛ք... Եթէ ձեզ թոյլ չեն տայ տները մտնել, քարոզեցէ՛ք կտուրների վրա»:

Ու գնացին նրանք: Վեց հարիւր տարուց յետոյ լուրից մի ուրիշ ձայն: Անապատի որդին մի խրոխտ, ոգևորված արաբ, սուրը պատեանում չէր դնում և մի և նոյն ժամանակ նոր խօսք, նոր ճշմարտութիւն էր քարոզում: «Վրէժի մէջ կայ ձեզ համար կեանք. խոհուն մարդիկ», ասում էր նա. «Հաւատացեալներ, իմ թշնամիներին, ձեր թշնամիներին մի համարէ՛ք ձեր բարեկամ... Աստուած արգելում է ձեզ բարեկամանալ նրանց հետ»:

Բարոյական խրատների մէջ պարուրած սարսափելի թոյներ էին գրանքը:

Եւ բորբոքվեց հրատապ Արեւելը: Խալամը կազմակերպված, կնքված էր: Նա տեղից բարձրացաւ, շարժվեց նոր խօսքը տարածելու համար: Դեռ խանձարուրդի մէջ նա դարձաւ մի ահուկ

սուր, որ խրվեց համաշխարհային պատմութեան սրտի մէջ և արիւնով շաղախեց նրա դարաւոր էջերը: Հովուական համեստ ցուպը չէր նրա նեցուկը, նրա սրտում չէր հաստատված հալածվելու, տանջանքների կրելու յօժարութիւնը, որովհետև նրա ձակապոխ չէր դրոշմված անմահ պատգամը. «Իրերեցէ՛ք միմեանց».— «Կտորեցէ՛ք», այս էր նրա խորհուրդը...

Հեթանոսական կրօնները ոչնչացան այդ յաղթական գնացքի առաջ: Մնաց Նազովրեցին, որի վարդապետութիւնը հիմնված էր այդ խորհրդաւոր գաղափարի վրա. «Իմ թագաւորութիւնը այս աշխարհից չէ»: Նա կանգնեց իսլամի առաջ, ընդունեց նրա հարուածները: Երկար ժամանակ արին թափեց, սրտից շատ կակիծներ հանեց, արտասուքի գետերով թրջեց այն սոսկալի աւերակները, որոնք իսլամի սիրած ու պաշտած գործն էին: Քրիստոնէութիւնը զիմացաւ ծանր հարուածներին, իսլամը քանդում էր, նա նորից շինում էր. իսլամը ոչնչացնում էր, նա ստեղծում էր: Քրիստոնէութիւնը—դա մարդկային բարձրագոյն մրաքն էր. իսլամը—այդ մտքի անհնար թշնամին, մի բռնի ու կոպտի ոյժ: Մի շարք դարեր արձանագրեցին բռնի ոյժի փառքը. միտքը այդ ժամանակ գործում էր աւերակների տակ, շինում էր, հրաշակերտում: Եւ նա իր յամառ ու տոկոն աշխա-

Թիւններն, մի բան ճիշդ է, որ յիրաւի իշխանութիւնը բարբարոսութիւն և զեղծումներ է գործել և որ այդ որջերի ազգաբնակիչները երկապայծից աւելի ամենաթշուառ կացութեան մէջ է գտնուում, մենք կարիք չունենք աւելացնելու, որ Բերլինում յանձն առած պարտաւորութիւնները ոչ մէկը չէ եղել իրագործված:

Բացի դրանից, հաւատացած, որ Գերմանիայի համակրութիւնը միշտ նրա կողմը կը լինի, Բարձր Գուռը պէտք է համաձայնվի ընդունել այն դառն բաժակը, որ պարտաւորում են նրան առաջարկելու: Եթէ հաւատալ այն բանին, ինչ որ խոսուում է ղեսպանատներում, այդ կօնֆէրէնցիայի աշխատանքներին որպէս հիմք կը ծառայի, բացի ներկայումս կատարվող քննութիւններից, և այն ղեկուցումը, որ ներկայացրեց 1879 թւին Արքեղին—փաշան, Անգորայի նախկին նախագահը և Արշիպէլազոսի այժմեան նախագահը:

Ինկնով անկեղծ և քաղաքակրթված մարդ, և ցոյց տալով ընդունակութիւն այն կարճ ժամանակամիջոցում, որ նա մնաց արտաքին գործերի մինիստրութեան մէջ, նրան յանձնարարվեց 1879 թւին, անգլիացի Բակիր-փաշայի և Նայ Մանասէ կֆէնդիի ընկերակցութեամբ, մի քննութիւն կատարել Հայաստանում: Նա այդպիսով պտտեց Տրայիզոնի, Լիբրուսի, Վանի, Սիվասի, Բիթլիսի վիլայէտները, ժողովուրդ ազգաբնակչութեան զանգատները, արձանագրելով նրանց կրած վնասները, և վերադարձին, նա խմբագրեց այն ղեկուցումը, որի մասին մենք խոսում ենք, և որը իր ժամանակին հաղորդեց ղեսպանութիւններին:

Այն նորմուտութիւնների շարքում, որ նա անհրաժեշտ էր համարում Հայաստանի համար, խառն ժամադրամէրիայի կազմակերպութիւնն է, որը բարկացած պէտք է լինի քրիստոնեաներից և մասնակցականներից, եւրոպական օֆիցիւրների հրամանատարութեան տակ:

Այդ վերջին պարագրաֆը տաք վիճաբանութիւնների առարկայ կը դառնայ, որովհետև կաշխատանք արդիւյք ղնել անգլիացիների առիւծի բաժին առնելու սովորական ձգտումներ:

Այդ պատճառով հայերը լաւ կանէին, առ ժամանակ, մեծ յոյս չը դնել, որ շուտով կիրառործվին իրանց ցանկութիւնները և շատ բան չը սպասել գումարավոր կօնֆէրէնցիայից:

Միջազգային կօնֆէրէնցիաները այդ կողմից շատ նման են պարլամենտական յանձնաժողովներին: Որքան անգամ նրանք անհետանք են մնում: Եւ սակայն, մենք ամբողջ արտից մեր բարեմաղթութիւններն ենք յայտնում, որպէս զի վերջ դրվի այն անտանելի դրութեանը, որին ենթակայ են հայկական նահանգները:

**ՀԱՅՈՑ ՀԱՐՅԸ ԵՒ ԵՒՐՈՊԱԿԱՆ ՄԱՍՈՒԼԸ**

**I**

Անգլիայի Բիրմինհամ քաղաքում մարտի 27-ին տեղի ունեցած ազատ եկեղեցական ժողովին նիստում պրոֆէսոր Ազար Բիթ խոսեց հայերի մասին, նկարագրելով արևելքի այդ հնա-

ղն նկատվում է այդ երկրում. բայց ներքին փոսած կազմակերպութիւնը անյոյս հիւանդի դրութեան է հասցրել նրան: Վաղուց է հասկացված, թէ ինչ է հարկաւոր պետական և հասարակական մի առողջ կենսք ստեղծելու համար. գիտեն ամենքը, որ կարևոր են, մասկան և կենսել: Նշանակութիւն ունեն ներքին ղեկավարներ: Նրանք խոստացված են հազար անգամ: Բայց դրանից ինչ օգուտ: Հաուրին անցնելի և ներկայի փաստերով հաստատում է, որ եւրոպական մտքով հասկացած որ և է ղեկորմ չէ կարող հաստատվել այդ երկրում:

Յիշեցէք մի քանի պատմական դէպքեր: Քասնական թակակներին Թիւրքիան ամեն կերպ տքնում է մի կերպ բաւարարութիւն տալ քրիստոնեայ Եւրոպային, որ պահանջում է քրիստոնեայ հպատակների համար մարդավայել իրաւունքներ, կենսելի և գոյքի ապահովութիւն, հաւասարութիւն օրէնքի առաջ: Ճնշված այդ պահանջների տակ, սուլթանների կառավարութիւնը դրաւոր բազմաթիւ խոստումներ է արել աշխարհի առաջ, մինչև անգամ 1876-ին խաղացել է քաղաքական այն կօնֆէրանսը, որ յօրինել էր Միթհաք փաշան և «Սումանեան սահմանադրութիւն» անունով հրատարակվել էր օրէնսդրական կարգով: Այնուհետև Բերլինի դաշնագրութիւնը, այնուհետև կառավարութեան ստէօրեախոյ խոստումները այն մասին,

դարեան քրիստոնեաների ներկայ օղբալի վիճակը և այն տանջանքները, որ նրանք կրեցին անցեալ պարլայ սարսափելի կոտորածի ժամանակ և նրանից յետոյ:

Պրոֆէսոր Թումայեանը մանրամասն ճառի մէջ բացատրեց, որ հայերին հալածելով հալածում են միակ առաջադէմ և քաղաքակրթ ոյժը երկրի մէջ:

Ժողովը որոշեց, որ պրոֆէսոր Բիթը ներկայանայ արտաքին գործերի մինիստրին և ժողովի կողմից յայտնի, թէ ցանկալի է հրատարակված տեսնել անգլիական հիւպատոսների հաղորդագրութիւնները Հայաստանում տիրող կարգերի և այնտեղ կատարվող անջքերի մասին:

**II**

Լօնդօնից, մարտի 30-ից, հետեւել շատ կարևոր տեղեկութիւնն են հաղորդում Բրիտոյ լաւադարձ հրատարակվող «Western Daily Press» լրագրին:

«Անգլիական կառավարութիւնը երէկ առանձին խորհրդակցութիւն հրաւիրեց յատկապէս հայկական խնդրի սպառնացող դրութեան մասին խորհրդակցելու համար: Անգլիայի և Պոլսի կառավարութեան յարաբերութիւնները հասել են ճգնաժամի: Այժմ մի միջոց պէտք է որոնել, որպէս զի հայկական ղեկավարները հարցը գործնական ընթացք ստանայ:

«Կառավարութիւնը թէն գործում է ուրիշ պետութիւնների հետ միասին, բայց միայնակ է ճնշումներ գործել Բ. Գրան վրա: Կարծես հասել է արտակարգ և խիստ գործողութեան ժամանակը:

«Բարձր Գրան վրա կարելի է ազդել միայն խիստ միջոցներով, իսկ հասարակ ցոյցերի վրա նա նայում է ոչ աւելի, քան մի հաշոյի վրա: Օսմանեան երկիրը եւրոպական դրբերով դրաւել վտանգաւոր հետեանքներ կարող է ունենալ, ուստի կառավարութիւնը որոնում է աւելի զիւրին միջոցներ»:

**III**

Թիւրքիայի «New-York Herald» թերթին ապրիլի 5-ից հեռագրում են Հոսմից. «Հայ կաթիլների պատրիարք Ազարեանը, քննիչ յանձնաժողովի գործուհեութիւնը աւարտվելուց յետոյ, կը գայ Հոսմ» մայիսի կրօնական ժողովին ներկայ լինելու և այն ժամանակ էլ կը ստանայ կարդիւնալութիւն: Վատիկանի սեփական հետազոտութիւնները համանման են առաջվայ անդեկուրիւններին»:

**IV**

«Daily Chronicle» թերթի մէջ կարդում ենք, որ Պոլսի ամերիկական ղեսպան Թըրքիլը յայտնել է Բարձր Գրան, որ նա ապահով չէ ամերիկական միսիօնարների և առհասարակ ամերիկական հպատակների վիճակի մասին Թիւրքիայում: Մասնաշեղծականների թշնամական վերաբերմունքի խիստ օրինակ տալիս է այժմ Թիւրքիլը, ուր անդադար հրացանաձգութիւններ տեղի ունեն և հայերը երկիրը փակվել են իրանց տներում և փողոց չեն դուրս գալիս. մի և նոյն ժամանակ ձերբակալութիւններն էլ շարունակվում են:

Թէ պահանջված ղեկավարները մտցնվում են կամ պիտի մտցնվեն: 70—75 տարի է, կրկնվում է մի և նոյնը, բայց իրապէս ոչ մի քայլ չէ արված. ընդհակառակն, մասնաշեղծական աշխարհը պարբերաբար սարսափներ է տարածում քաղաքակրթված աշխարհում այնպիսի գաղափարներով, որոնց նմանները վաղուց են դարձել երկաթի խաւար դարերի սեփականութիւն:

Պատմական այդ փորձը առաջ է բերում իսլամի մնանկութեան պարզ պատկերը: Եւ իբրև, ինչ անէ Թիւրքիան: Մի կողմից նրանից պահանջում են ղեկավարներ, պահանջում են սպառնալիքներով, որոնք մի օր կարող են գործադրվել, վերջնական վտանգի ենթարկելով հիւանդ մարդուն: Միւս կողմից, կառավարութիւնը, եթէ կամենայ էլ կատարել հօր պետութիւնների պահանջը, մի անաղին խորխորատից կը մտնեայ միւս խորխորատի ծայրին. այդտեղ արդեն ինքնասպանութիւնն է, որովհետև ընդունելով ղեկավարների անհրաժեշտութիւնը, նա դրանով կը քաչէ իր գոյութեան վրայով մի անագին, ոչնչացնող զիծ, քանի որ այդ ղեկավարները ամենից առաջ պիտի խախտեն, օտպակն իսլամութեան հիմքերը, այն սիւները, որոնց վրա հաստատված է սուլթանների գահը: Եւ այդ պատճառով նա միակ փորկութիւն որոնում է մի կեղծաւոր, երկրմի քա-

Վրաստանական «Messenger» լրագրին Լօնդօնից գրում են, որ հայ-կաթիլի գիւղերի կատարկապէս խաղաղ գիւղացիները Սասունում, ցոյց էին տալիս թիւրքաց զօրքերին իրանց այն անդորրադրերը, որոնցից երևում էր, որ նրանք հարկերը վճարել են, կամենալով ցոյց տալ իրանց հաւատարմութիւնը ղէպի կառավարութիւնը: Սակայն զօրքերը շարունակում էին իրանց կոտորածները, առանց ուշադրութիւն դարձնելու այդ անդորրադրերի վրա:

**VI**

Անգլիական «Daily Telegraph» լրագրի յատուկ թղթակցը Բերլինից հեռագրում է ապրիլի 3-ից. «Եւ հաւաստի արբիւրները իմացայ, որ Կ. Պոլսի բրիտանական ղեսպանը ներկայացրեց սուլթանին ձեր յատուկ թղթակցի հեռագրիները Հայաստանից: Նորին մեծութիւնը այժմ համոզված է, ըստ էութեան, հեռագրիներում հաղորդված շատ անջքերի ճշմարտութեան մէջ: Փաստաբար, որոնց ճշգրտութիւնը կասկածներից դուրս է գտնվում, սուլթանի վրա այնպիսի տպաւորութիւն գործեցին, որ նա յայտնեց իր վճիռը վերանորոգութիւններ մտցնել Հայաստանում որչափ կարելի է շուտ և պատժել բարբարոս յանցանքների մէջ միջադրվողներին»:

**VII**

Երկուշաբթի, ապրիլի 8-ին, Լօնդօնի Ֆուլդոմ կոչված արուարձանում կայանալի ժողովրդական միտինգին, որի նպատակն է բողոքել Թիւրքիայի գործուհեութեան եղանակի դէմ Հայաստանում, կը նախագահի տիկին Շվանը, պարլամենտի յայտնի անդամի կինը:

Հետօրեքի թւում գտնվում է մի հայ միսիօնար, որը 4 տարի ապրել է Հայաստանում և նորերս ազատվել է բանտից:

**VIII**

Կ. Պոլսից, մարտի 29-ից, «Новости» լրագրին գրած մի թղթակցութիւնից քաղում ենք հետեւեալը.

«Այստեղ աւելի ևս համոզվում են, որ Բ. Գրան չի աջողվել կօնֆէրէնցիայի գումարումն խնայարկը՝ հայոց գործերի առիթով: Թիւրքերը շատ չեփօթված են, տեսնելով Անգլիայի և Ռուսաստանի համերաշխութիւնը այդ հարցի վերաբերմամբ: Ինչ վերաբերում է Ֆրանսիական ղեսպան պ. Կամբոնին, նա ամեն կերպ պաշտպանում է պ. Նէլիզովին: Ներկայումս կառավարութիւնը և սուլթանը յուսահատական ճիգեր են գործ դնում, որպէս զի կօնֆէրէնցիա չը գումարվի, որովհետև այդ կօնֆէրէնցիայի քննութեան առարկայ կարող են դառնալ նոր, և ոչ պակաս վտանգաւոր հարցեր, որիմակ, մակեդոնական հարցը՝ Բերլինի դաշնագրի 23-դ յօդուածը իրագործելու մասին, կրկնացնելի հարցը և այլն:

Գերմանիայի և Աւստրիայի գործուհեութեան եղանակը նոյնպէս շատ յոյսեր չէ տալիս թիւրքերին՝ խուսափելու կօնֆէրէնցիայից, մասնաւորապէս որ այդ պետութիւնները չեն կարող պաշտպանել Թիւրքիան, Անգլիայի, Ռուսաստանի և Ֆրանսիայի ճնշման դէմ»:

Քաղաքականութեան մէջ, որի մի ծայրը ուղղված է ղէպի պետութիւնները և միւսը—ղէպի հպատակները:

Բայց Թիւրքիան ղեռ լաւագոյն օրինակն է: Եթէ նրան շնորհված լինէր իմաստութիւն և նա միանգամից կարողանար այնպիսի մի ղիբքը ըստեղծել իր քրիստոնեայ հպատակների համար, այն ժամանակ նրա վրա այլ ևս ծանրացած չէին լինի պահանջները և նա թողված կը լինէր իր կամքին: Ենթադրենք մի րօպէ թէ մասնաշեղծական աշխարհում չը կայ քրիստոնեաների հարցը և մեր առաջ միլիօնաւոր ժողովուրդն է, որ դաւանում է իսլամը: Միթէ նա, այդ ժողովուրդը, կարիք չունի բարենորոգումների, միթէ նրա կենսքը կատարելութիւն է:

Այդպիսի հարց մասնաշեղծական աշխարհը չէ դնում իր առաջ: Իր կրօնը նա համարում է ուղիղ երկրպիղի իջած և նրա մի նշանախնայ անգամ փոխելը անհարկն է համարում: Ետ ահա դանիւր նա դիմադրել է քրիստոնեայ ազգերի շարժումներին, որոնք նրա անտանելի լուծից մի երկիր, մի ազգ ազատելու նպատակն ունէին: Այդ ազատարար արշաւանքներին միշտ թշնամի հանդիսանալով, մասնաշեղծական աշխարհը ոչ միայն չէ կարողացել դրանցից վերցնել և սեփականել, որ և է կուլտուրական, հանրաշահ միտքը, այլ,

**ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ**

ԲՈՇԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԺՈՂՈՎՐ

Կիրակի, ամսի 9-ին, կայացաւ կովկասեան ԲՈՇԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ տարկան ժողովը:

ԲՈՇԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ տարկայ ընթացքում մի շարք գիտնական ղեկուցումներով աշխատել է շօշափել բՈՇԿԱԿԱՆ և առողջապահական զանազան խնդիրները: ԲՈՇԿԱՆ Արտեմիևի նախաձեռնութեամբ, մանրամասն քննութեան և մշակութեան առարկայ է դարձել մանկաբարձներ և ուսեալ տատմերն և պատրաստելու խնդրը և որոշվել է խնդրամատոյց լինել կառավարութեան, որ թոյլ տրվի հիմնել մանկաբարձութեան տեսական և գործնական կուրսեր դաւառներում:

Ընկերութեան ուշադրութեան երկրորդ և կարևոր առարկան եղել է խօսքը և խօսիւրայի բացիւնների հետազոտութիւնը կուր դեպի ջրում:

Տարկան նիստին բՈՇԿԱՆ Մարկը կարգաց մի մանրամասն և մշակված ղեկուցում առողջարանների կամ սանատորիաների մասին, որոնք վերջին ժամանակներս սկսել են հիմնվել արտասահմանում թրքախոր դէմ կուսելու համար: Գրանց ամարանցների նման մաքուր ուղ ունեցող տեղերում հիմնված առանձին բուժարաններ են, որտեղ հիւանդները շնչում են մաքուր օդ, ստանում են առողջ, մանրաբար կերակուր և անում են զանազան ֆիզիկական վարժութիւններ: Այդ բուժարանները շատ լաւ արդիւնքներ են տուել. առողջացողները թիւր կազմում է մինչև այժմ չը լսված, չը տեսնված տղուտ:

Չեկուցանող առաջարկում էր սանատորիաներ քանակ և կովկասում, ուր նոյնպէս թրքախոր շատ տարածված է: Օրինակ, Թիֆլիսում թրքախոր ամենատարածված հիւանդութիւններից մէկն է, և իւրաքանչիւր տարի բաղնաթիւր զոհեր է տանում:

Ընկերութեան գործուհեութիւնը առհասարակ բազմաթեանակ է և արդիւնաւետ: Յաւալի է սակայն, որ նշանակած գիտնական մրցանակների համար չէ ներկայացվել ոչ մի շարադրութիւն:

Նիստը, որ սկսվեց 1 1/2 ժամին, վերջացաւ ժամը 3-ին:

**ՆԱՄԱԿ ԽՄԱԿԳՐՈՒԹԵԱՆ**

Թիֆլիս, ապրիլի 9-ին

Անանուն թերթի խմբագիրը վերջապէս ներդրեց իր նոր քաղաքագործութեան մասին, որի առիթով արդէն տեղական լրագրիները իրանց կարծիքը յայտնեցին: Սակայն այդ ստայոյը, յանդուգն տօնով գրված «բացատրութիւնը» (տես այդ թերթի №№ 58 և 59) Սպանագրեանի այն սովորական գէշքերից մէկն է, որով նա միշտ՝ այդպիսի ղէպքերում աշխատում է, իրան պաշտպանելու:

«Մեր թերթի մէջ, որում է այդ «հետքը», ճշրբատարակած էինք մեզ ուղղած մի հեռագիր պ. Յ. Ալաջաբեանի ստորագրութեամբ: Այդ սուտ է և Հեռագիրը մեզ էր ուղարկված, բայց անանուն

ընդհակառակն, աւելի ևս մոլեռանդութիւն է ձեռք բերել իր առանձնացած, անհայտ ու անհամբերող հակացողութիւնների մէջ:

Պարզ է, որ ղեքից վիտղ հովերը այդ անգլին ամբոխի վրա աղբեցութիւններ անել չեն կարող: Եթէ մարդկային ազգը միաբան պիտի առաջադիւնէ, եթէ յետմնաց շարքերը միայն ենթված, փոսած նիւթեր պիտի տարածեն առողջ օրգանիզմի մէջ, ապա ուրեմն պէտք է, որ մասնաշեղծական աշխարհն էլ մտնէ մտքերի և հակացողութիւնների յեղափոխութիւնը, պէտք է ժողովրդական մասալի ծոցում բուն դէմ վերանորոգվելու պահանջը, պէտք է ժողովրդական կենսքը ինքը երկնէ այդ պահանջը: Մինչև որ չը հաստատվի մի փրկարար անբաւականութիւն իրերի այժմեան դրութիւնից, մինչև որ ծնունդ չառնէ աղուտ բողոքը, այդ երկունքի ժամը չի հասնի:

Երբ կը գայ այդ ժամանակը:

Մարգարէութիւններ չանենք: Այժմ էլ լսվում են ձայներ, այժմ էլ կան մարդիկ, որոնք կամենում են մեռելային անարթութեան մատուցած հասարակութեան մէջ կենդանի գործ բարոյել: Ենթ առանձին հետաքրքրութեամբ և բաւակաւնութեամբ դիտում ենք այդ նոր երևոյթն և ուղջուում ենք նրան բոլոր արտով:

(Կը շարունակվի)

Թերթի խմբագիրը իւրացրել էր և հրատարակել նրա բովանդակութիւնը, որի համար անցեալ օր հեռագրատան գրասենեակի կառավարիչ և այլ պաշտօնեաների առաջ նա իր հատուցումը ըստ արժանւոյն ստացաւ:

Շարունակելով իր խօսքը, այդ պարունը իր «պատասխանի» մէջ հետեւեալ անմիտ և անկապ նախադասութիւններ է շարում. «ընդունելով (?) որ այդ հեռագրի բովանդակութիւնը ծանօթ է (?) մեր Թերթի ընթերցողներին, պիտի ասենք, որ այդ հեռագիրը հրատարակել ենք, յարգելով տիրակից Շ. և նրա եղբայր պ. Ա. և լիովին համոզված լինելով (?) որ այդ հեռագիրը իրեն հեռագրական բաց նամակ (լսել էք արդեօք) ուղարկված է մեզ տղապիտու համար» (?), այսպէս ասած՝ сапоги вь сметанѣ.

Արդեօք այդ անմիտ, տղայական բարբաջանքի վրա պէտք է բան աւելացնել. լսել էք, որ փակ մասնաւոր հեռագրի բովանդակութիւնը կարող է յայտնի լինել մի Թերթի ընթերցողներին, կամ որոշ անձին ուղղած հեռագիրը իրաւունք ունենար ուրիշը ընդունել իրեն հեռագրական, բաց անուանած նամակ, և հրատարակել Եւ ինչ հրաշքով կարող է իմ կնքված հեռագիրը ծառայել ուրիշին իրեն հեռագրական բաց նամակ... Օրվայ «հերոսը» ուրիշ ելք չը գտնելով դիմում է այնպիսի վայրագ ստախոսութեան, որի համար հին աշխարհում յանցաւորներին իսպառ արքայում էին մարդկանց հասարակութիւնից, իսկ արեւելքում այդպիսիների լեզուները կտրում:

Ստանալով և իր մօտ պահելով տեղական Թերթի միջոցով ինձ ուղարկած հեռագիրները, այդ «հերոսը» իրան թոյլ է տալիս անելու. «Մենք հեռագիրը տպել ենք այն հաստատ համոզմունքով (?) որ դա մի բաց նամակ է (?) և ուղղված է երկը Թերթի ընթերցողներին նպատակով» (?): Արդ՝ եթէ դուք արդէն խոստովանում էք, որ հեռագիրները ուղղված էին նաև ուրիշ խմբագրութիւններին, ինչ իրաւունքով ստանում էք և պահում էք ձեզ մօտ մինչև այժմ ուրիշ հեռագիրները, չը նայելով հեռագրատան պահանջներին...

Գուք, պարոն, ասում էք, որ ստացականի վրա չէք ստորագրել, հեռագրաբերին չէք տեսել և ոչ էլ նրանից հեռագիր էք ստացել: Բայց միթէ այդ հանգամանքը կարող է ձեր ձեռքը carte blanche տալ ամեն տեսակ անիրաւութիւններ գործելու: Այդ հեռագիրները ստացված են ձեր խմբագրութեան մէջ, ինչպէս վկայում են ստացականները, որոնց վրա А. Спандарянъ է ստորագրված: Գուք կարգաւորվ հասցէն, եթէ պատուաւորապէս մարդ լինէիք, պիտի շտապէիք անմիջապէս հասցնել ձեզ չը պատկանող հեռագիրները ըստ հասցէի և ոչ թէ իրաւունք համարէիք ձեզ բաց անել և ապա հրատարակել ձեր անանուն Թերթի մէջ մասնաւոր հեռագրի բովանդակութիւնը: Միթէ այնչափ անգործակալ էք, որ չէք կարողանում որոշել հեռագրի հասցէն կամ կարծում էք, որ անպատիժ կարելի է իւրացնել այն՝ ինչ որ ձեզ չէ պատկանում:

Ձեր վերջին պատասխանները կարելի է ամենայն իրաւամբ ընդունել իրեն ձեր մտաւոր և բարոյական սնանկութեան վկայական: Հետեւելով ձեր տարօրինակ լօգիկային և քարոզած սկզբունքներին, պէտք է ենթադրել, որ ձեր միջոցով ուրիշին յանձնելու համար ուղարկած փողի ծրարը իրաւունք ունէիք բանալ, փողը սեփականացնել և ապա ծրարի սեփականատիրոջ պահանջին պատասխանել, որ «Թերթի խմբագիրը բաց է արել ծրարը, համոզված լինելով, որ նրա մէջ ներփակած փողը իրեն է ուղարկված անուշ անելու...»

Մի խօսք ևս. ձեր վերջին «պատասխաններ» մէջ ես գտնում եմ զրպարտութիւն բառը. ուրիշի մասնաւոր հեռագիրը սեփականացնել, բաց անել և հրատարակել և ապա երբ այդ գարշիլի փաստը հաստատվում է, ասել, որ ինձ զրպարտում են, ընդունակ է միայն Սպանդարյան: Բայց իմացել, պարոն, որ կան մարդիկ, որոնց անկարելի է զերպարտել, որովհետև ստորութիւնը չէ կարող զերպարտելու...

Սա մեր վերջին խօսքն է: Թովհ. Սպանդարյանց  
ՆԵՐԹԻՆ ԼՈՒՐԵՐ  
Մեզ հաղորդում են, որ ապրիլի 9-ին, գիշերը,

Թել և թի վանահայր Յովսէփ վարդապետ Խարազեանին իր ծառան սպանել է և փախել: Սկսված է քննութիւն:

Բարձրագոյն շնորհված է, ապրիլի 2-ին, էջմիածնի հայ-լուսաւորչական սինոդի անդամ Երեմիա եպիսկոպոս Գալստեանին ս. Աննայի շքանշանի առաջին աստիճանը:

Մեզ հաղորդում են, որ կովկասի հայոց Բարեգործական ընկերութեան կենտրոնական գրադարանը այս օրերս ստացել է Մօսկվայից, Սմբատ Շահազիզի և Թիֆլիսաբնակ իշխանուհի Նունէ Արղունեան Երկայնաբազուկից գրքերի նուէրներ: Առաջինը ընծայել է 49 կտոր ուսանելիք ընտիր գրքեր, իսկ երկրորդը՝ 37 կտոր վեհտիկի Միլիթարեան հրատարակութիւններից, որոնց թւում ամապիսի հազուագիտ գրքեր, ինչպէս Չամչեանի երեք հատոր «Հայոց պատմութիւնը», Ինճիճեանի «Հայաստանի ստորագրութիւնը» և Ռօլէնի «Հնախօսութիւնը»:

Հնգօրեայ դադարումից յետոյ նորից հրատարակվելով, «Արեւիք» լրագիրը իր պարտքն է համարում ալ և ձախ շնորհակալութիւններ ցրվել: Ահա թէ ինչ է գրում այդ լրագիրը. «Հնգօրեայ դադարէն ետքն այսօրուան է իւր հրատարակութիւնը վերսկսելու արտօնուած ըլլալով, «Արեւիք» պարտ էր սեպէ այս առթիւ իւր շնորհակալութիւնը յայտնել ներքին գործոց նախարար Բարձր խալի Միֆթաթ փաշայի, ներքին գործոց նախարարութեան խորհրդական փեմ. Ահմէտ Ռէֆիզ պէյի և ի մասնաւորի տղապարկական վերատեսուչ փեմ. Պէճմէթ պէյի»:

Ապրիլի 7-ին և ապրիլի 9-ին հոգեհանգիստներ կատարվեցին Ներսիսեան դպրոցի երկու բարերարներին, այն է Աւետիք Փիրոյեանցի և Յովսէփ Էֆէնդեանցի յիշատակին, որոնցից առաջինը թաղված է Թիֆլիսի ս. Նշան և երկրորդը՝ վանքի մայր եկեղեցու բազում:

Ռուսաց դերասանական խումբը ապրիլի 7-ին ներկայացրեց իշխան Սուբբատովի «Дочь Вѣка» (Դարի աղջիկը) անուամբ դրաման, որը իսկապէս մի սուղտակալ մեղադրում է, բացառելով վեց գործողութիւնից: Չը նայելով պիէտայի աչքի ընկնող պակասութիւններին, ներկայացումը բաւական աջող անցաւ. մանաւանդ դերասանուհի Սարլինա-Գոլակայա իր մտածած և գեղեցիկ խաղով հաճելի տպաւորութիւն թողեց հասարակութեան վրա: Կիրակի, ամսի 9-ին, նոյն խումբը ներկայացրեց Չուգեյրմանի «Հայրենի օջախ» պիէտան:

Մեզ ուղարկված է Բաֆֆիի մի վէպիկը, «Ով էր մեղաւոր» վերնախմբի, որ լոյս է տեսել այս օրերս դրամատիկ Չաքարիա Գրիգորեանցի հրատարակութեամբ: Գրքի վրա ոչինչ ծանօթութիւն չը կայ, և մենք չը գիտենք, թէ արդեօք այդ փոքրիկ վէպիկը Բաֆֆիի անտիպ գրուածներէն է, թէ արտատպված է որ և է հրատարակութիւնից: Սակայն վէպիկի բովանդակութիւնից երեւում է, որ դա տաղանդաւոր գրողի զգրական թոթովանքներիցն է, որ գուցէ նա գրել է 70-ական թւականներին: Գրքի մէջ յայտնված մտքերը, տէնդենցիաները վերին աստիճանի համակրելի են, բայց նա գրված է թոյլ կամ աւելի լաւ է տեսել «Վրամիտ» ձևով: Մեր կարծիքով, «Կայծերի», «Խնկի» և «Սամուէլի» հրատարակութիւնից յետոյ, չարժէ առանձին զբոյցով հրատարակել Բաֆֆիի այնպիսի թոյլ գրուածները, ինչպիսիք են «Ով էր մեղաւոր»: Այդպիսի արտադրութիւնները հեղինակի մահից յետոյ, պէտք է հրատարակել միայն նրա գրուածքների լիակատար ժողովածուի մէջ, որը մի և նոյն ժամանակ զաղափար պէտք է տայ հեղինակի մտքի և տաղանդի աստիճանաբար զարգացման մասին:

ԱՍՍԼՔԱՍԱՍԻՅԱՆ մեզ գրում են, «Երէկ, մարտի 30-ին, հողին յանձնեցինք ձեռնարանի նախկին աշակերտ Յակոբ Բեովիլը՝ մարտի 1894 թ. Նոյնիսերին արձակվելով ձեռնարանից, նա հեռանում է էջմիածնից, առանց միջոցների և Գիլիջանի սարբերով ու Սեանով անցնելու ժամանակ Բեովիլը՝ ձեռքով գրողի զէմ ունենում է Երևանի հասարակութեան նուիրած միակ ետիկցին: Արդէն ձեռնարանում նրա ուժանպատակ էր թոյլ

կուրծք անցր է դառնում ցրտի դէմ. ճանապարհին Թերթի բարբոքում է ստանում և մերձիկ մահ հասնում Թիֆլիս: Այնտեղ նա պաշտպանութիւն է գտնում հանգուցեալ Լեոն վարդապետ Սոջանեանի կողմից, որը հնգական ռուբլի ամսականներով իր աշակերտներից շատերին օգնում էր: Բեովիլը՝ ձեռքն իր վիճակի մասին ոչինչ չէ գրում իր ծնողներին, աշխատելով բոլոր կարիքները հինգ ռուբլիով հոգար: Հիւանդութիւնը սաստկանում է օրից օր, որին նպաստում են անմարդ սնունդը և հոգեկան վիշտը: Պատահմամբ հայրենակիցներից մէկը Թիֆլիսում հանգուցեալին տեսնելով, առաջարկում է առն դառնալ, բայց նա մերժում է ծնողներին երևալ: Վերջապէս ընկերների, բժշկի և ուսուցիչների խորհրդով ստիպվում է համաձայնվել և անա երեք օր զառանցանքի մէջ ծնողների մօտ տանջվելուց յետոյ, մարտի 29-ին վախճանվեց: Պատանու վերջին խօսքերը շատ դառն էին և ծանր տպաւորութիւն թողեցին բոլորի վրա. նրա մահվան հանգամանքները տեղիս հասարակութեան մեծ վրդովմունք պատճառեցին: Հանգուցեալի վրա մի պսակ դրվեց, «Մի խումբ պատանիներից, իրանց վաղամեծ ընկերուց»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՌԻՒԱԹԻՅ

Կ. Պոլիս, մարտի 29-ին  
Մարտ 25 չարթ օրէն ի վեր Պոլսոյ մէջ ընդհանուր մտառանջութիւնը ուրիշ բան չէ, բայց եթէ մարտ 24-ին սուլթանին Անգլիոյ դեսպանին տեսակցութիւնը: Ահաւասիկ ինչ որ մենք հոս տեղեկացանք բաւական լաւատեղեկ աղբիւրներէ: Սուլթանը յայտարարեց իր գնականին, թէ ինք որոշած է ջովիսեր մը զրկել Անատոլիոս, որպէս զի ընէ հայոց վիճակը, և անոր համեմատ պատաստէ բարեկարգութեանց ծրագրը մը: Գնացանք այս հինգօրեայ հնարքին պատասխանելով ըստ ինչ, թէ հարկ չի կայ առանկ նեղութիւն մը յանձն առնելու, որովհետև հայոց համար բարեկարգութեան ծրագրը մը պատրաստուած է արդէն, որ պիտի յանձնուի իրեն, սուլթանին, և միայն պիտի խնդրուի անոր գործադրութիւնը:

Այս կտրուկ պատասխանը թէ և շատ անհաճօք եղեր է սուլթանին, բայց և այնպէս ուզած է զիտնալ, թէ ինչ է այդ պատրաստուած ծրագիրը: Գնացանք պատասխանելու է, թէ ժամանակին կը հաղորդուի: Սուլթանը յետոյ կանչել տուաւ Տատեան Արթին փաշան, և շատ խօսեցաւ հետը, բայց այդ մասին զեւ լուր մը չի կայ. հայ պաշտօնեաներու հետ եղած բոլոր գործերը ընդհանրապէս շատ զաղտնի կը պահուին, մինչդեռ թիւրքերը բազմաթիւ են, գիտցածին ալ կը տեսնեն, չը գիտցածին ալ: «Պէ՛լ-Մէ՛լ-Վազէտի» խմբագիրը սուլթանին չը ներկայացաւ, վասն զի Անգլիոյ դեսպանը չէ ուղղած, որ դրան միջամտութիւն ըլլայ և սուլթանը կարծէ թէ պահպանողական կուսակցութեան աջակցութիւնը պիտի վայելէ: Կըտուի թէ խմբագիրը արդէն մեկնել է Պոլսէն:

Գարձեալ Հայաստանէն սարափեկի լուրեր կը հասնին, այսօր կը խօսուէր, թէ Չմէկաժազ ալ աղէտ մը պատահած է, այսինքն կոտորած մը, բայց ստուգել կարելի չէր: Ու յայտնի է թէ ամեն րօպէ Հայաստանի մէջ կոտորածներու վախը կայ:

Ամերիկեան միսիոնարներու ակումբներուն մէջ կը խօսուի, թէ Միացեալ-Նահանգներէն չորս կամ հինգ մարտանաւ պիտի գան Կիլիկիոյ ծովեզերքը, որպէս զի ի հարկի քրիստոնեաները պաշտպանեն:

Նախորդ նամակով մը ըսած էի, որ պատերազմը ընդարձակ տեղեկագիր մը ներկայացուցած է Կ. Պոլսոյ դեսպաններուն և խոստացած էի աւելի մանրամասն տեղեկութիւններ հաղորդել այդ պատիւները վրա: Ահաւասիկ այդ մանրամասնութիւնները ամիսի կերպով:

Պատերազմը ինչէն ետքը իր առաջին թագրերը, որուն մէջ արտօնութիւն խնդրած էր եկեղեցական պաշտօնեայ մը Սատուն զրկելու, որպէս զի քննիչ մասնախումբին օգնէ և ժողովուրդը հովուէ, կը կրկնէ յայտարարութիւնը, զոր ըրած էր նոյն թագրերի մէջ հայ ազգի ներկայ վիճակը ճշգրիտ կերպով կառավարութեան

ուշադրութեանը ներկայացնելու մասին, և ըսելէ ետքը, թէ իրաց վիճակը ծածկել ամենէն գէշ հետեանքը կրնայ ունենալ, կը պարզէ այն ալ և ալ զեղծումները և կեղեքումները, որոնք հայ ազգին բողոքներուն պատճառ եղած են:

Պատերազմը տեսութիւն մը կընէ նախ հայ ազգին անցեալին ու նկարագրին վրա, աշխատասէր ու գործունեայ ժողովուրդ մը, որ ամեն դասակարգէ կարող անձնաւորութիւններ առաջ բերած է, և որ միշտ վճարած է իր վրա ծանրացած տուրքերը երբէք քաղաքական խնդր չի յարուցանելով ու համարաշխարհամբ ապրելով ուրիշ տարրերու և մասնաւորապէս թիւրք տարրին հետ: Այս վիճակը լիովին բացատրելէ ետք պատերազմը կըսէ թէ՛ հակառակ ազգին նկարագրին ու համբարատարութեանը իրերը անանկ վիճակ մը առած են, կառավարական պաշտօնեաներուն և թախառաշխիկ քերթու չէրբէղ ցեղերուն զեղծումներուն և կեղեքումներուն պատճառաւ, որ կարելի չէ իրը մարդ ու իրը ազգ ապրել:

Այս կեղեքումներուն մէջ նախ յիշելու է այն զրկանքները, զոր հայը կը կրէ իրը հողագործ: Հողագործութիւնը հայրերուն զխաւոր զբաղումը ըլլալով՝ պատերազմը մասնաւորապէս կը ծանրանայ այս կէտին վրա ու կը յիշէ բոլոր պարագաները, որոնցմով տեղի կունենան կեղեքումները: Հողերու անտեղի ու անարդար գրաւում, տուրքերու գանձումն անիրաւ ձեւը և այն զեղծումներն ու բռնութիւնները՝ որոնց այդ գանձումները տեղի կուտան, դժուարութիւններն ու վնասները՝ զորս հողագործը կը կրէ տուրքերու վարձակալներուն (միւլէթ էր մ) պահանջումներուն առթիւ և այլն: Պատերազմը ցաւով կը յիշէ նաև հայ վանքերու սեպհական կառուածներուն գրաւումը, որ ամալութեան վերածած է այդ մենաստաններէն շատերը:

Կառավարութեան պաշտօնեաներու այս զեղծումներուն վրա կուգան աւելաւ քերթերու ու չէրբէղներու կեղեքումները, որոնք զրկելու վրա կը բռնանան, կառավարութեան տուրքերէն դուրս տուրքեր կանեն, պատուի և ինչքի բռնաբարութիւններ կը գործեն, կը չարչարեն ու կը սպաննեն, իրը թէ այսպիսի իրաւունք մը տրուած ըլլայ իրենց: Պատերազմը երկարուէն կը խօսի կեանքի ու պատուի անպահովութեան չը գոյութեան վրա, կը յիշէ սուպատարութիւնները, առեւանգումները և հարստահարութիւնները, զորս թիւրք, քերթ ու չէրբէղ ազդեցիկ մարդեր ու ցեղապետներ կը գործեն անաղար Հայաստանի մէջ, չի մոռնար ցոյց տալ նաև սրբապղծութիւնները, որոնց առաջիկայ եղած են հայկական եկեղեցիներն ու մենաստանները:

Այս վիճակը աւելի կը ծանրանայ այն կեղեքումներով ու զեղծումներով, որոնք իրեն հետեւանք ժամանակէ մը ի վեր հայոց նկատմամբ տիրող անվստահութեան, տեղի կունենան անընդհատ. այսպէս, տուններ կը խուզարկուեն և այդ խուզարկութեանց ասանկ պատիւր և ինչքի բռնաբարութիւններ տեղի կունենան. լրտեսները և խուզարկութեան պաշտօն ունեցող օստիկանները, ինչպէս ամեն կարգի պաշտօնեաներ ու ազդեցիկ անձեր կառավարութեան ցոյց տուած հակառակութեան կողմուին, իրենց անձնական ատելութիւնները յագեցնելու և կամ դրամական անօրէն շահեր ընելու նպատակով:

Պատերազմը կը յիշէ շատ մը անիրաւ սքստորեն և մասնաւորապէս առանձնաշնորհմանց հակառակ եղած սքստորեն և բանտարկութիւնները, ինչպէս եկեղեցական դասին պատկանող անձերուն, որոնց թիւը 50-է կանցին: Այդ զեղծումները տեղի կունենան հակառակ պատերազմաբանի առանձնաշնորհումներուն, եկեղեցականներու աքստոր, անչափահասներու խլամպացում և այլն:

Պատերազմը կը վերջացնէ տեղեկագիրը, պահանջելով այնպիսի նոր վիճակի մը հաստատութիւնը, որ ժողովուրդը կարենայ ապրել իր ազգութեան ամեն առանձնաշնորհութիւններովը և վայելէ ամեն պահանջութիւն, մասնաւորապատիւ և ինչքերու: \*\*\*

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՅՑ

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 7 ապրիլի թագաւոր կայսրը և թագուհի կայսրուհի Ալեքսանդրովնա Ֆեոքորով-

